

Պ-263-24.05.2013,15.10.2013-ՍՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 102-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով. «Եթե դատական կարգով հաստատված է, որ աշխատողի եւ գործատուի միջև գոյություն ունեն (գոյություն են ունեցել) փաստացի աշխատանքային հարաբերություններ, ապա աշխատանքային հարաբերությունները համարվում են ծագած այն օրվանից, երբ աշխատողը փաստացի անցել է աշխատանքի: Աշխատողը աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հաստատելու նպատակով իրավունք ունի դիմել դատարան փաստացի աշխատանքային հարաբերությունների գոյության ժամանակահատվածում, ինչպես նաեւ փաստացի աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո մեկ տարվա ընթացքում: Դատարանի օրինական վճռով գործատուի և աշխատողի միջև փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստի հաստատումը չի ազատում գործատուին օրենքով սահմանված պատասխանատվությունից»:

Հոդված 2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետով.

«12.1) աշխատողի և գործատուի համաձայնությամբ սահմանված փորձաշրջանի արդյունքներով.»:

Հոդված 3. Օրենսգրքի 265-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին նախադասությունում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

2) 1-ին մասի երրորդ նախադասությունում հանել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը.

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի եւ աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչեւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, եւ աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց *հատուցում*՝ ոչ պակաս քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Առաջարկության հեղինակը	Հոդված, մաս, կետ	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը կամ հիմնավորումը
Հեղինակներ	Հոդված 1	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով. «Դատարանի օրինական վճռով գործատուի և աշխատողի միջև փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության փաստի հաստատումը չի ազատում գործատուին օրենքով սահմանված պատասխանատվությունից:»	Լրացումը նպատակ է հետապնդում ևս մեկ անգամ ամրագրել, որ դատարանի օրինական վճռով գործատուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունների հաստատումը չի ազատում գործատուին անօրինական աշխատանք կատարելու թույլտվության տալու և (կամ) հարկադրելու համար սահմանված անբարենպաստ հետևանքներից, և գործատուն չի ազատվում օրենքով սահմանված պատասխանատվությունից:
Հեղինակներ	Հոդված 3	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «աշխատանքում չվերականգնելու դիմաց» բառերից հետո «փոխհատուցում» բառը փոխարինել «հատուցում բառով»:	Փոփոխությունը խմբագրական է: